<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ *ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ* ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԾՁԲ-19/2»

ք. Կապան «06» հուլիս 2019 թ.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Ռ.Զ.Մարուխյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **Արթուր Ավետիսյան Ա/Ձ-ն**, ի դեմս Արթուր Ավետիսյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համացանցի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **500 000 (հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում

ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ	Ա/Ձ Արթուր Ավետիսյան
Հասցե՝ ք. Երևան, Տերյան 105	Հասցե՝ ք. Կապան, Դավիթ-Բեկի 12/4
Բանկը՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Կապանի մ/ճ	Բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
Հ/Հ 16022402510800	Հ/Հ 2470801237110010
ՀՎՀՀ 01504054	ՀՎՀՀ 78640811
Ռեկտոր՝ Ռ.Զ.Մարգարյան	Ա/Ձ՝ Ա. Ավետիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«06» հուլիս 2019 թ. կնքված
ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԾՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50311120	Համակարգչային սարքերի պահպանում և վերանորոգում -լիցքավորվող տոների զանգվածը՝ ոչ պակաս քան 150 գրամ, տպաքանակը՝ տպիչի արտադրող ընկերության կողմից ներկայացված տպաքանակի չափով ±10%, էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ Լուսազգայուն թմբուկի փոխարինումը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակը Մաքրող դանակի փոխարինումը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ Բոլոր փոխարինված մասերը պետք է լինեն նոր (նախապես չօգտագործված) Քարտրիջի չիպի առկայության դեպքում, ընկերությունը պարտավորվում է լիցքավորելիս փոխել այն Ընկերությունը պարտավորվում է քարտրիջի լիցքավորման ընթացքում տրամադրել փոխարինող քարտրիջ, որը կշահագործվի մինչ լիցքավորումը Ընկերությունը պարտավորվում է յուրաքանչյուր շաբաթ՝ երեքշաբթի և հինգշաբթի օրերին, ներկայանալ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ լիցքավորման ենթակա քարտրիջները վերցնելու և 2	դրամ	500 000	1	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդի 28	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև **2021 թվականի մայիսի 25-ը:Ընդ որում 2020-2021 թվականներին** մատակարարումն կիրականացվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

		օրյա ժամկետում լիցքավորված վերադարձնելու: Քարթրիջների ցանկը ներկայացված է կից Հավելված 1.1-ում Ծառայություն իրականացնող կազմակերպությունը իր միջոցներով իրականացնում է սարքերի տեղափոխումը համալսարանի սպասարկման կենտրոնից (պատվեր ստանալուց հետո մինչև հաջորդող աշխատանքային օրվա ավարտը) և հետ վերադարձը, վերանորոգումն իրականացնել առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում: Սարքերի դիագնոստիկայից հետո անհրաժեշտ մասերի փոխարինումը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պայմանագրում առկա փոխարինման ենթակա կետերը ներառում են նաև մասերը Բոլոր փոխարինվող մասերը պետք է լինեն նոր և նախապես չօգտագործված Սարքերի ցանկը ներկայացված է Հավելված 1.1-ում					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Կապանի մ/ճ
Հ/Հ 16022402510800
ՀՎՀՀ 01504054
Ռեկտոր՝ Ռ.Զ.Մարուխյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արթուր Ավետիսյան
Հասցե՝ ք. Կապան, Դավիթ-Բեկի 12/4
Բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
Հ/Հ 2470801237110010
ՀՎՀՀ 78640811
Ա/Ձ՝ Ա. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍՅՈՒՆԻՔ ՄԱՐԶ SYUNIK MARZ PRIVATE ENTREPRENEUR ARTUR AVETISYAN 78640811 01UP145691 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

Հավելված N 1.1
«08» հունվարի 2019 թ. կնքված
ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀՇՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 1. համակարգչային սարքերի պահպանում և վերանորոգում		Ծառայության միավորի գինը
Canon 728	Լիցքավորում	4000 Չորս հազար
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	2300 Երկու հազար երեք հարյուր
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	1500 Հազար հինգ հարյուր
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	1500 Հազար հինգ հարյուր
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1200 Հազար երկու հարյուր
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	1000 Հազար
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար
Canon 725	Լիցքավորում	4000 Չորս հազար
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	2300 Երկու հազար երեք հարյուր
	Կորտտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	1500 Մեկ հազար հինգ հարյուր
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	1500 Մեկ հազար հինգ հարյուր
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1200 Մեկ հազար երկու հարյուր
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	1000 Հազար
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար
C-EXV14	Լիցքավորում	7000 Յոթ հազար
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	5000 Հինգ հազար
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	4500 Չորս հազար հինգ հարյուր
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	3000 Երեք հազար
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	3000 Երեք հազար
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	2000 Երկու հազար
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	10000 Տաս հազար
	Լիցքավորում	8000 Ութ հազար

C-EXV33	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	6000 Վեց հազար
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	6000 Վեց հազար
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	3000 Երեք հազար
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	3000 Երեք հազար
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	2000 Երկու հազար
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	10000 Տաս հազար
EP-27	Լիցքավորում	4000 Չորս հազար
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	2500 Երկու հազար հինգ հարյուր
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	3000 Երեք հազար
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	2000 Երկու հազար .
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1800 Մեկ հազար ութ հարյուր
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	1800 Մեկ հազար ութ հարյուր
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար
samsung d101	Լիցքավորում	4000 Չորս հազար
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	3500 Երեք հազար հինգ հարյուր
	Կորոնտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	2500 Երկու հազար հինգ հարյուր
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	1800 Մեկ հազար ութ հարյուր
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1800 Մեկ հազար ութ հարյուր
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	1000 Մեկ հազար
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար
samsung d104	Լիցքավորում	4000 Չորս հազար
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	3500 Երեք հազար հինգ հարյուր
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	2500 Երկու հազար հինգ հարյուր
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	1800 Մեկ հազար ութ հարյուր
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1800 Մեկ հազար ութ հարյուր

	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	1000 Մեկ հազար
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար
LasrJet HP HP Q2612A	Լիցքավորում	4500 Չորս հազար հինգ հարյուր
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	2500 Երկու հազար հինգ հարյուր
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	3000 Երեք հազար
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	2000 Երկու հազար
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1500 Մեկ հազար հինգ հարյուր
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	800 Ութ հարյուր
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար
HP CF280A	Լիցքավորում	4500 Չորս հազար հինգ հարյուր
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	2500 Երկու հազար հինգ հարյուր
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	3000 Երեք հազար
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	2000 Երկու հազար
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1500 Մեկ հազար հինգ հարյուր
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	800 Ութ հարյուր
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար
HP **Q2613A**	Լիցքավորում	4500 Չորս հազար հինգ հարյուր
	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	2500 Երկու հազար հինգ հարյուր
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	3000 Երեք հազար
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	2000 Երկու հազար
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1500 Մեկ հազար հինգ հարյուր
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	800 Ութ հարյուր
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար
HP C7115A	Լիցքավորում	4500 Չորս հազար հինգ հարյուր

	Լուսազգայուն թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը (Барабан)	2500 Երկու հազար հինգ հարյուր
	Կորոտրոնի լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Каротрон)	3000 Երեք հազար
	Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ լիսեռը (Магнитный вал)	2000 Երկու հազար
	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ դանակը (Ракель)	1500 Մեկ հազար հինգ հարյուր
	Պատյանի մասերի փոխարինում ներառյալ մասերը	800 Ութ հարյուր
	Լիցքավորում, պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը	5000 Հինգ հազար

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Կապանի մ/ճ
Հ/Հ 16022402510800
ՀՎՀՀ 01504054
Ռեկտոր՝ Ռ.Զ.Մարուխյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Արթուր Ավետիսյան
Հասցե՝ ք. Կապան, Դավիթ-Բեկի 12/4
Բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
Հ/Հ 2470801237110010
ՀՎՀՀ 78640811
Ա/Ձ՝ Ա. Ավետիսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԱՐԹՈՒՐ
ԱՎԵՏԻՍՅԱՆ
ARTUR
AVETISYAN
78640811

Հավելված N 2
«06 հունվարի 2019թ. կնքված
ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԾՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	0%	0%	0%	0%	0%	50 000	70 000	100 000	130 000	150 000	180 000	200 000	**200 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ՝ՀՀ դրամով: **2020-2021թվականների** համար սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Կապանի մ/ճ
Հ/Հ 16022402510800
ՀՎՀՀ 01504054
Ռեկտոր՝ Ռ.Հ.Մարուխյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արթուր Ավետիսյան
Հասցե՝ ք. Կապան, Դավիթ-Բեկի 12/4
Բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
Հ/Հ 2470801237110010
ՀՎՀՀ 78640811
Ա/Ձ՝ Ա. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«06» հունվար 2019 թ. կնքված
ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀՇՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«06» հունիսի 2019 թ. կնքված
ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀՇՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն